# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1449 - Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1777-Ն որոշման հավելվածի 9-րդ կետը՝

1. 2022 թվականի դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական օդանավի հետ տեղի ունեցած ավիացիոն պատահարի քննությունն անհապաղ կազմակերպելու և վարելու նպատակով նշանակել հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար | - հանձնաժողովի նախագահ |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (տրանսպորտի ոլորտը համակարգող) | - հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ | - հանձնաժողովի անդամներ |
| ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ | |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |

| | |
|---|---|
| ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ | |
| ՀՀ ոստիկանության պետի տեղակալ | |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության փորձագետ | - հանձնաժողովի քարտուղար |

2. Հանձնաժողովի նախագահին՝

1) ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել համապատասխան մասնագետների.

2) հանձնաժողովի իրականացրած քննության արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ